ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

ՈՐՈՇՈՒՄ

24 հունիսի 2020 թ.

Քննարկելով ՀՀ ԳԱԱ 2019թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության արդյունքները, ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը արձանագրում է, որ ՀՀ ԳԱԱ Նախագահությունում, բաժանմունքներում և գիտական կազմակերպություններում իրականացվել է ինչպես հիմնարար և կիրառական բնույթի գիտական նոր կարևորագույն արդյունքների ստացմանը, այնպես էլ ենթակառուցվածքների պահպանմանը նպատակաուղղված գործունեություն:

2019թ. ԳԱԱ համակարգի գիտահետազոտական կազմակերպությունները կատարել են գիտական աշխատանքներ 6 նպատակային, 45 բազային և 139 թեմատիկ ծրագրերով: Ստացված արդյունքներով հրապարակվել են 169 մենագրություն և ժողովածու (14-ն արտասահմանում), 26 ուսումնական ձեռնարկ և դասագիրք(1-ն արտասահմանում), 2240 հոդված (953-ն արտասահմանում), 637 թեզիս (243-ն արտասահմանում):

ԳԱԱ աջակցել է համակարգի գիտական կազմակերպություններին նոր սարքեր և սարքավորումներ ձեռքբերելու հարցում:

Ավանդական կերպով առանձնակի ուշադրություն է դարձվել ակադեմիայի և բուհական համակարգի համագործակցության արդյունավետության բարձրացման հարցերին, քննարկվել են համատեղ գործող ամբիոնների աշխատանքի արդյունավետության բարձրացման, ակադեմիայի գիտական կազմակերպությունների և բուհերի համապատասխան ֆակուլտետների միջև համագործակցության ծրագրերի հեռանկարները: Ներկայումս ակադեմիայի մոտավորապես 400 գիտնականներ համատեղության կարգով դասախոսում են բուհերում:

Հաշվետու տարում Նախագահությունը բազմիցս անդրադարձել է միջազգային գիտական կապերի ամրապնդման հարցին, հատկապես՝ Եվրոպական միության «Հորիզոն-2020» ծրագրի աշխատանքներին ակտիվ մասնակցությանը և միջազգային համահայկական գիտական ցանցերի ստեղծման և զարգացման խնդրին՝

օգտագործելով արտասահմանում աշխատող առավել հայտնի հայ գիտնականների ներուժը:

Ընդհանուր ժողովը նշում է, որ զգալի կերպով աճել է համակարգի գիտնականների մասնակցությունը հանրապետության ռազմաարդյունաբերությանը վերաբերող գիտական ծրագրերին:

Նախագահության որոշմամբ ուսումնասիրվել է ՀՀ ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման գործընթացի զարգացման խնդիրը:

Քննարկվել են ինստիտուտների 2019թ. բազային, թեմատիկ, նպատակային ծրագրերով, միջազգային դրամաշնորհներով և պայմանագրերով ֆինանսավորման հարցերը: Մշտապես ուշադրության կենտրոնում է գտնվել երիտասարդ գիտնականների գիտական զեկուցումների, նրանց գործուղումների կազմակերպումը և նրանց մասնակցության ապահովումը միջազգային գիտաժողովների աշխատանքներին:

Քննարկվել է ինստիտուտների ներքին կառուցվածքի օպտիմալացման, գործող որոշ գիտական լաբորատորիաների և խմբերի լուծարման, միավորման, խոշորացման և նորերի ստեղծման հարցը:

Ընդգծված ուշադրություն է դարձվել ինստիտուտների միջև հնարավոր միջգիտակարգային հետազոտություններ իրականացնելու հարցին:

Գիտական կազմակերպություններում անց են կացվել տարեկան հաշվետու ժողովներ, քննարկվել և հաստատվել են 2019թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության մասին հաշվետվությունները:

Նախագահությունը անդրադարձել է ՀՀ կառավարությունից և վերադաս մարմիններից ստացված բոլոր փաստաթղթերին, ներկայացրել է իր առաջարկություններն ու դիտողությունները: Հատուկ ուշադրությամբ և մանրամասն քննարկվել են բարձրագույն կրթությանը, գիտությանը, երկրի պաշտպանությանը, առաջավոր տեխնոլոգիաներին, գիտության ֆինանսավորմանը առնչվող օրենսդրական և իրավական ակտերի նախագծերն ու ներկայացվել են արմատական դիտողություններ և առաջարկություններ:

Արձանագրելով հաշվետու ժամանակաշրջանում համակարգում տեղ գտած դրական տեղաշարժերը և ձեռքբերումները՝ ընդհանուր ժողովը միաժամանակ նշում

է մի շարք կարևոր խնդիրներ, որոնց լուծումը կնպաստի աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Ընդհանուր ժողովը կարևորում է կառավարման մարմինների հետ Ակադեմիայի ղեկավարության պարբերական հանդիպումների անհրաժեշտությունը՝ երկարաժամկետ լուծումներ պահանջող գիտական խնդիրների վերաբերյալ:

Ընդհանուր ժողովը առաջարկում է ՀՀ ԳԱԱ նախագահությանը մշտական ուշադրություն կենտրոնում պահել հետևյալ հարցերը.

1. Գիտության ոլորտում ներկայումս կատարվող և նախատեսվող բոլոր բարեփոխումների ընթացքում պահպանել ՀՀ ԳԱԱ բարձր կարգավիճակը՝ որպես հանրապետության խոշորագույն գիտական կենտրոնի, որի հիմնական առաքելությունն է զարգացնել հիմնարար գիտությունները և դրանց հիման վրա՝ կիրառական գիտությունները:

2. Հիմք ընդունելով համակարգում գործող գիտական կազմակերպությունների կարծիքը, որը նրանք փակ գաղտնի քվեարկությամբ ընդունել են իրենց գիտական կոլեկտիվների ընդհանուր ժողովներում և հաշվի առնելով պատմականորեն իրեն արդարացրած, ակադեմիաների համար հատուկ կառուցվածքային առավելությունները, պահպանել և զարգացնել այն՝ օգտագործելով նաև աշխարհի նմանատիպ կազմակերպությունների ժամանակակից դրական փորձը:

3. Շարունակել զարգացնել գիտական կազմակերպությունների հետագա օպտիմալացման գործընթացը՝ հիմք ընդունելով կազմակերպությունների գործունեության արդյունավետության չափորոշիչները:

4. Պահպանել գիտական աստիճանաշնորհման երկաստիճան համակարգը:

5. Հատուկ ուշադրություն դարձնել երիտասարդ կադրերի պատրաստմանը և նրանցով ինստիտուտների համալրմանը.

6. Խորացնել ՀՀ բուհերի հետ ակադեմիական գիտական կազմակերպությունների համագործակցությունը:

7. Խրախուսել գիտական կազմակերպությունների կողմից ՀՀ տնտեսության զարգացմանը, պետության պաշտպանական համակարգի և անվտանգության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակումը՝ ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելու նպատակով: ՀՀ Պաշտպանության և Բարձր տեխնոլոգիական

արդյունաբերության նախարարությունների հետ քննարկել համատեղ հետազոտական և տեխնոլոգիական կենտրոն ստեղծելու հարցը:

8. Պահպանել ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպություններում հայցորդի, ասպիրանտի և դոկտորանտի պատրաստման իրավունքը:

9. Ցուցաբերել հնարավոր աջակցություն ՀՀ ԳԱԱ ԻԱՊԻ-ում Հանրապետության համար կարևոր սուպերհամակարգչային կենտրոնի ստեղծմանը:

10. Կազմակերպել հայկական համապարփակ ազգային նոր հանրագիտարանի հրատարակումը:

11. Արշավախմբերի աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով այդ աշխատանքների համար նախատեսել որոշակի հավելյալ ֆինանսավորում:

12. Գիտական կապերի ընդլայնման և զարգացման խնդիրներում ակտիվ օգտագործել սփյուռքի գիտնականների, հատկապես ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամների ներուժը:

13. Կարևորելով մշակութային և մարդկային կապիտալի ձևավորման գործում հասարակական գիտությունների դերը, ընդգծված ուշադրություն դարձնել բնագավառի հետազոտությունների թեմատիկայի ու մեթոդաբանության արդիականացմանը՝ համազգային գիտամշակութային զարգացման, օտար հարձակումներից Հայոց պատմության ու մշակույթի պաշտպանությանը նպաստելու նպատակով:

14. Շարունակել և ավելի ակտիվացնել աջակցությունը ԼՂՀ ԿԳՄՆ “Արցախի գիտական կենտրոնին”:

Ընդհանուր ժողովը որոշում է

1. Հավանություն տալ ՀՀ ԳԱԱ 2019թ. գիտական և գիտակազմակերպական գործունեությանը:
2. Հանձնարարում է ՀՀ ԳԱԱ նախագահությանը դիմել ՀՀ կառավարությանը հետևյալ հարցերով՝
   - Հաշվի առնելով, որ ՀՀ ԳԱԱ անդամների վերջին ընտրությունները տեղի են ունեցել 2014թ. և հիմք ընդունելով «ՀՀ Գիտությունների ակադեմիայի

մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները, դիմել ՀՀ կառավարությանը 2020թ. ՀՀ ԳԱԱ անդամների ընտրությունների անցկացման համար.

- գիտության զարգացումը և նորամուծական գործունեությունը խթանելու նպատակով ձեռնարկել միջոցառումներ գիտաշխատողի աշխատավարձը հասցնելու առնվազն հանրապետությունում միջին աշխատավարձի կրկնապատիկին.
- գիտաշխատողների գիտական աստիճանի համար տրվող հավելավճարները հարկերից ազատել և ավելացնել կենսաթոշակներին.
- ՀՀ ԳԱԱ կազմակերպությունների պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի պահպանման, վերանորոգման և անվտանգ շահագործման համար հատկացնել հավելյալ բյուջետային ֆինանսավորում.
- առաջարկել ՀՀ ԳԱԱ կազմում գործող գիտական կազմակերպությունների արտաբյուջետային ֆինանսական միջոցներով ապրանքների ձեռքբերումների գործընթացը ազատել գնումների մասին օրենքի պահանջներից.
- վերացնել 70 տարեկանից բարձր տարիք ունեցող գիտնականին թեմայի ղեկավար լինելու արգելքը.
- առաջարկել ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությանը մշակել միջոցառումների ծրագիր՝ ուղղված Սևանա լճի մակարդակը բարձրացնելուն, ջրառ չկատարելուն, ջրամբարից և ջրատարներից կորուստները կրճատելուն, ինչպես նաև ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ կրճատելու կենսածին տարրերի հոսքը լիճ, խստացնելու կենսառեսուրսների պաշտպանությունը և անցնելու կառավարելի ձկնորսության համակարգին:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ Ռ.Մ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ.Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ